Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՐԱԲՅԱՆ ԼՈՒՍԻԿ ՍԵՅՐԱՆԻ

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր **Պ.Գևորգյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարապետյան Ի.Կ.

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հովհաննիսյան Ա.Վ.

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Մ.Նալբանդյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. նոյեմբերի 20-ին ժամը 12^{00}-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. հոկտեմբերի 20-ին

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Ա.Հ. ՍՎԱՋՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Կրթության համակարգի հումանացման և ժողովրդավարացման, դպրոցի զարգացման արդի փուլում առաջին պլան է մղվում աշակերտների ուսումնական գործունեության արդյունավետ կազմակերպման, դրա որակի վերահսկման վերաբերյալ նոր մոտեցումների առաջադրման հիմնախնդիրը:

Տարրական կրթության գերակա խնդիրը կրտսեր դպրոցականի անձի զարգացումն է, նրա՝ որպես ուսումնական գործընթացի և ինքնազարգացման սուբյեկտի կայացումը և անհատականության ձևավորումը:

Սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկմամբ բացահայտվում են դրանց ձևավորվածության մակարդակները և ուսուցման գործընթացում առկա թերությունները, որոնք նրանք ձեռք են բերում ուսումնական աշխատանքների կատարման յուրաքանչյուր փուլում: Այդ տեսանկյունից տարրական դպրոցում սովորողների ուսման որակի վերահսկումը, գիտելիքների գնահատումը համարվում է ուսուցման գործընթացի էական բաղադրիչը, որոնցով և բնութագրվում է դպրոցի գործունեության արդյունավետությունը:

Այն ենթադրում է ոչ միայն գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների ձևավորվածության մակարդակի բացահայտում, այլև ուսումնական գործունեության դրդապատճառների ձևավորում, ինքնավերահսկաման, ինքնգնահատման, ինքնաստուգման կարողությունների զարգացում: Սովորողների ուսումնական հաջողությունները պայմանավորված են նաև աշակերտի ուսումնական դրդապատճառներով, ինքնուրույնությամբ, ակտիվությամբ:

Ուսուցիչների մանկավարժական գործունեության նպատակը այսօր դառնում է ոչ միայն գիտելիքների հաղորդումը, այլև սովորողների ինքնագործունեության կազմակերպման հմտությունների ձևավորումը, որն իր հերթին ենթադրում է ուսուցչական հսկողության փոխարինումը սովորողների կողմից սեփական գործունեության ինքնահսկման և ինքնակարգավորմամբ:

Ուսուցման սկզբունքների, տարբեր մեթոդների ու ձևերի կիրառման արդյունավետությունը, դասագրքերի նպատակային օգտագործումը և մեթոդական մշակումների որակը, կրթության բովանդակությունը ուղղակիորեն կապված են այդ հիմնախնդրի լուծման հետ:

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկումը, ստուգումը և գնահատումը ուղղված են սովորողների ուսուցման արդյունքի և ուսման որակի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ստացմանը, որը վերլուծելով ուսուցիչը անհրաժեշտ շտկումներ է մտցնում ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման մեջ: Դրա համակարգվածությունից, հրապարակայնությունից և օբյեկտիվությունից են կախված ուսուցման որակը և դաստիարակչական շատ խնդիրների լուծման արդյունավետությունը:

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման, դրանց հաշվառման, ստուգման ու գնահատման հիմնախնդիրը հետազոտողները քննարկել են տարբեր տեսանկյուններից: Ցավոք, քիչ են այն աշխատությունները, որոնք վերաբերում են կրտսեր դպրոցականների ուսման որակի հսկողության և վերահսկողության, գիտելիքների ստուգման ու

գնահատման գործառույթներին, մեթոդներին, սկզբունքներին, տեսակներին, ձևերին ու միջոցներին: Կարելի է առանձնացնել այդ հիմնախնդրի ուսումնասիրման մի քանի հիմնական ուղղություններ, որոնք առաջ են քաշել մի շարք գիտնականներ:

Մեծ խումբ են կազմում այն աշխատանքները, որոնք վերաբերում են ուսուցման ընթացքում գիտելիքների յուրացման որակի վերահսկման ու գնահատման հիմնախնդրին (Ի.Յու.Լերներ, Ա.Բ.Վորոնցով, Ն.Ֆ.Վինոգրադով, Ա.Գ. Կալանիկովա, Դ.Շ. Մատրուս, Դ.Մ. Պոլև, Ն.Ն. Մելնիկովա, Ն.Ն. Կրյուկովա, Մ.Գ. Աստվածատրյան, Ս.Տ.Վարդումյան, Հ.Հ.Պետրոսյան և ուրիշներ) ձևավորվող գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջներին, գիտելիքների որակի վերահսկման մեթոդներին, ուսուցման ավանդական համակարգում գիտելիքների հաշվառման տեսակներին (Մ.Ի. Զարեցկի, Ի.Կ. Կուլիբաբա, Վ.Ա. Սլաստենին, Ի.Ֆ. Իսաև, Ե.Ն. Շիյանով, Պ.Ի. Պիդկասիստի, Ի.Յու. Լերներ, Ե.Ի. Պետրովսկի, Ս.Ի. Ռունովսկի, Մ.Ն. Սկատկին, Վ.Պ. Ստրեզիկոզին, Ն.Ֆ. Տալիզինա, Տ.Ի. Շամովա, Պ.Ի. Տրետյակով, Տ.Մ. Դավիդենկո, Գ.Ն. Շիբանովա, Ա.Օ. Թոփուզյան, Լ.Թ. Ասատրյան, Գ.Ս. Ափրոյան, Զ.Ա. Ասատրյան, Ն.Դ. Գրիգորյան և ուրիշներ):

Հրապարակված աշխատություններում ցույց են տրված գիտելիքների որակի ստուգման ու գնահատման վերահսկող, ուսուցանող և դաստիարակող գործառույթները, բացահայտված է գիտելիքների գրավոր, բանավոր, վերահսկողության իրականացման անհատական ու խմբային, թեմատիկ ու հանրագումարային հարցման ձևերն ու տեսակները:

Հիմնախնդրի վերաբերյալ հայեցակարգային մյուս մոտեցումը կապված է գնահատման դաստիարակչական գործառույթի դիտարկման հետ՝ հաշվի առնելով աշակերտի վրա ուսուցչի գնահատման ազդեցության հոգեբանական կողմը (Ս.Գ. Անանև, Լ.Ի. Բոժովիչ, Ա.Ի. Լիպկինա, Լ.Ա. Ռիբակ, Գ.Ս. Ափրոյան, Զ.Ա. Ասատրյան, Ք.Հ. Բդոյան և ուրիշներ):

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում՝ կապված ուսուցման գործընթացում ժամանակակից մանկավարժական և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման հետ, երևան են եկել հիմնախնդրի ուսումնասիրման նոր տեսանկյուններ: Ուսուցման գործընթացում ուսման որակի վերահսկողությունը կառավարման անհրաժեշտ գործառույթ է, որը տեղեկատվություն է տալիս այդ գործընթացի արդյունավետ կազմակերպման և կարգավորման վերաբերյալ: Դա բարձրացնում է հսկողության որակը, նրա հուսալիությունը և չափանիշների հիմնավորվածությունը:

Մի շարք գիտնականների կողմից դիտարկված են գնահատման և չափման որակական, լրատվական, վիճակագրական մեթոդները, տարբեր տեսակի ստուգողական առաջադրանքների, թեստերի հուսալիությունն ու արդյունավետությունը, տեխնիկական միջոցների և տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ ստուգման եղանակները (Ս.Ի. Արխանգելսկի, Վ.Պ. Բեսպալկո, Տ.Ա. Իլյինա, Ա.Գ. Մոլիբոգ, Ն.Մ. Ռոզենբերգ, Ն.Ֆ. Տալիզինա, Ն.Մ. Շախմաև, Ս.Մ Ասատրյան, Ն.Դ. Գրիգորյան, Վ.Գ.Գյուլազյան և ուրիշներ): Այդ հիմնախնդիրը ուսումնասիրողների կողմից ձևակերպվել է ավելի հստակ պահանջներ պլանավորվող գիտելիքների որակի, գնահատման չափանիշների նկատմամբ, բացահայտվել են տարբեր թեստերի, հարցաշարերի առավե-

լություններն ու թերությունները, մշակվել են գիտելիքների վերահսկման մեթոդիկաներ:

Ելնելով այս մոտեցումներից՝ հիմնավորվում է, որ դպրոցականների ուսուցման որակի վերահսկողությունը՝ գիտելիքների հաշվառումը, ստուգումն ու գնահատումը կախված են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից: Այսինքն՝ առկա են հիմնախնդրի վերաբերյալ տարբեր մեթոդաբանական մոտեցումներ, սակայն դեռևս ոչ լիարժեք են լուսաբանված կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի վերահսկման ձևերը և մեթոդները, և գնահատման՝ որպես վերահսկողության կարևորագույն գործառույթի ազդեցությունը աշակերտների ինքնագնահատման, ինքնաստուգման, ընդունակությունների զարգացման վրա: Դիտարկված չէ նաև ուսուցման գործընթացում վերահսկողության նպատակների և ընթացակարգի համահարաբերակցության հիմնախնդիրը:

Այսինքն՝ ելնելով կրթության նոր հարացույցից և գերակայություններից՝ նորովի մշակման կարիք են զգում ըստ տարիքային առանձնահատկությունների՝ սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման տեսակները, մեթոդներն ու ձևերը, ըստ ցուցանիշների՝ ստուգողական հարցերի կանխորոշիչ նշանակությունը որոշելու եղանակները, ստուգման անհատական, խմբային և համակցված ձևերը:

Տարրական դպրոցի արդյունավետ գործունեության համար էական այս հիմնախնդրի արդիականությամբ է պայմանավորված մեր հետազոտությունը:

Հետազոտության նպատակն է լրամշակել կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների որակի վերահսկման, դրանց հաշվառման և գնահատման արդյունավետ տեսակների, մեթոդների ու ձևերի համալիրը:

Հետազոտության օբյեկտը տարրական դպրոցի ուսուցման գործընթացում սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների որակի վերահսկման գործընթացն է:

Հետազոտության առարկան կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների որակի վերահսկման դրանց հաշվառման և գնահատման տեսակների, ձևերի ու մեթոդների համալիրն է:

Հետազոտության գիտական վարկածը. կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեությունը արդյունավետ կլինի, եթե՝

- արդի կրթական բարեփոխումների համատեքստում սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների որակի վերահսկումը դիտարկվի որպես ուսուցման գործընթացի էական բաղադրիչ և ուսուցչի գործունեության արդյունավետության չափանիշ,
- բացահայտվեն տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների որակի վերահսկման գործընթացում առկա թերությունները և դժվարությունները՝ հաշվի առնելով նրանց տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները,
- լրամշակվեն և փորձարարությամբ հիմնավորվեն կրտսեր դպրոցականների գիտելիքների յուրացման, կարողությունների, հմտությունների որակի վերահսկման տեսակների, ձևերի, մեթոդների համալիրը, ինչպես նաև գնահատման սկզբունքներն ու չափանիշները:

Ելնելով հետազոտության նպատակից ու գիտական վարկածից՝ սահմանվել են հետևյալ **խնդիրները.**

1. Վերլուծել տարրական դպրոցում գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի վերահսկման, դրանց հաշվառման, ստուգման ու գնահատման ավանդական և ժամանակակից համակարգերը և դրանց վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները:
2. Բացահայտել կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման, ստուգման, գնահատման գործընթացում առկա բացերն ու թերությունները, նախանշել դրանց վերացման ուղիները:
3. Լրամշակել տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի վերահսկման՝ հաշվառման, ստուգման և գնահատման տեսակների, մեթոդների ու ձևերի համալիրը և փորձարարությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել.

- ուսուցչի և աշակերտների հաղորդակցման ու փոխգործակցության վերաբերյալ փիլիսոփայական, մանկավարժական և հոգեբանական գիտությունների հիմնարար դրույթները (Ջ.Դյուի,Վ.Ի.Անդրեև, Վ.Պ.Բեսպակլո, Յու.Գ.Ֆոկին Ե.Ն.Շիյանով և այլոց)
- ուսումնական գործունեության ընթացքում աշակերտի անձի ձևավորման, նրա տարիքային-հոգեբանական առանձնահատկությունների հաշվառման վերաբերյալ սոցիալ-հոգեբանական և մանկավարժական տեսությունները (Ս.Լ. Ռուբինշտեյն, Ա.Ն. Լեոնտև, Պ.Յա. Գալպերին, Վ.Ա.Յուդով, Դ.Բ. Էլկոնին, Լ.Ի. Բոժովիչ, Բ.Ի. Դոնով, Ս.Ռ.Գևորգյան և այլք),
- անձնակողմնորոշիչ մոտեցման գաղափարները (Ն.Ն. Ալեքսեև, Ե.Վ. Բոնդարևսկայա , Ի.Ս. Յակիմանսկայա, Ջ.Ա.Ասատրյան և այլք),
- սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման՝ հաշվառման, ստուգման ու գնահատման կառուցվածքի հայեցակարգային մոտեցումները (Բ. Անանև, Յու. Բաբանսկի, Տ. Դավիդենկո, Ն. Դաշկևիչ, Ն. Շևանդրին, Ի. Լերներ, Ն. Նիկիտինա, Ի. Խառլամով, Շ. Ամոնաշվիլի, Լ.Ա. Սահակյան, Մ.Գ. Աստվածատրյան, Ս.Մ. Վարդումյան, Ս.Մ. Խրիմյան, Հ.Հ. Պետրոսյան, Գ.Ս. Ափրոյան, Ա.Օ.Թոփուզյան, Ջ.Ա. Ասատրյան, Ն.Դ. Գրիգորյան և այլք),
- սովորողների ուսման որակի վերահսկման, գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման նորմատիվային փաստաթղթերը:

Առաջադիր խնդիրների լուծման և գիտական վարկածի ստուգման համար օգտագործվել են մանկավարժական հետազոտության հետևյալ **մեթոդները՝**

- փիլիսոփայական, մշակութաբանական, հոգեբանամանկավարժական, ուսումնամեթոդական գրականության տեսական վերլուծություն,
- տարրական դպրոցի ուսուցիչների աշխատանքային փորձի, ստեղծագործական գործունեության ուսումնասիրում և վերլուծություն,
- զրույց, հարցազրույց, անկետավորում, թեստավորում, սովորողների ուսումնական գործունեության արդյունքների վերլուծություն,
- մանկավարժական փորձարարություն,

- փորձագիտական գնահատման և ինքնագնահատման մեթոդ,
- փորձարարական հետազոտության արդյունքների վիճակագրական վերլուծություն և համեմատական մշակում:

Հետազոտության գիտական նորույթը՝

- Առաջադրվել են տարրական դպրոցում սովորողների կրթական, դաստիարակչական, գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման գործառույթները՝ սոցիալական, տեղեկատվական, կառավարչական, հուզական:
- Լրամշակվել են տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման՝ ստուգման և գնահատման տեսակները, ձևերն ու մեթոդները: Այն ներառում է վերահսկման տեսակները (համակցված, տարբերակված, որակական, քանակական, նախապես ծրագրածի հետ համապատասխանության), ձևերը (ռուբրիկ, հրապարակային մատյաններ, պարբերաթերթեր, թղթապանակ, ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներ, ցուցահանդես-ցուցադրություն, թեստային առաջադրանքներ), մեթոդներ (համադրական, հավանականության):
- Ձևակերպվել են կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորվածության չափանիշներն ու մակարդակները՝ գիտելիքների ծավալը, խորությունը, գիտականությունը, հաստատունությունը, գիտելիքները մտավոր աշխատանքի մեջ և պրակտիկայում օգտագործելու կարողություններն ու հմտությունները, որոնք կնպաստեն ուսման որակի վերահսկման ու գնահատման ժամանակակից համակարգի կատարելագործմանը:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է տարրական դպրոցում սովորողների ուսման որակի վերահսկողության, գիտելիքների ստուգման և գնահատման գործառույթների տեսակների, ձևերի և մեթոդների մասին տեսական և մեթոդաբանական մշակման մեջ՝ կրթական բարեփոխումների համատեքստում: Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման՝ ստուգման և գնահատման ձևերին ու տեսակներին վերաբերող հիմնական տեսությունները տեսական նոր մոտեցումներով հարստացնելու մեջ: Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, գնահատման համակարգի բովանդակային և գործունային բնութագրերը անձնակողմնորոշիչ և մարդասիրական մոտեցումների տեսանկյունից բացահայտելու մեջ:

Հետազոտության գործնական նշանակությունը՝ տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման՝ ստուգման և գնահատման ձևերի, մեթոդների լրամշակված համալիրը գործնական օգնություն կլինեն ուսուցիչներին, մանկավարժական բուհերի տարրական կրթության ֆակուլտետների ուսանողներին:

Հետազոտության բազան: Հետազոտությունն իրականացվել է 2005-2009 թվականներին: Հետազոտության բազա են հանդիսացել Լոռու մարզի Վանաձորի թիվ 3 և 5 դպրոցները, Ստեփանավանի թիվ 1, 6 դպրոցները:

Հետազոտության մեջ ներառվել են 150 կրտսեր դպրոցական և 32 դասվար:

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ երեք փուլով.

Առաջին փուլում (2005-2006թթ.) ուսումնասիրվել և վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժական, փիլիսոփայական, հոգեբանական գրականությունը, սովորողների գիտելիքների գնահատման, կարողությունների, հմտությունների որակի վերահսկման տեսակների ու ձևերի պատմական զարգացման վերաբերյալ առաջավոր մանկավարժական փորձը:

Երկրորդ փուլ (2006-2007թթ.): Իրականացվել են անկետային հարցումներ Լոռու մարզի Վանաձորի և Ստեփանավանի դպրոցներում: Շարունակել ենք ծանոթանալ ուսուցիչների առաջավոր փորձին, մանկավարժական գրականությանը և փաստաթղթերի ուսումնասիրմանը:

Երրորդ փուլ (2007-2009թթ.): Կատարել ենք փորձարարություններ, փորձարկել ենք սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի վերահսկողության տեսակների, ձևերի և մեթոդների մեր կողմից մշակված տեսական մոտեցումները: Շարադրել և ձևավորել ենք ատենախոսությունը:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները:

1. Տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման ու գնահատման լրամշակված տեսակների, ձևերի և մեթոդների համալիրը, որը ապահովում է ուսուցման գործընթացի արդյունավետությունը և կատարում է տեղեկատվական, կառավարչական, կրթական, դաստիարակչական, հուզական, սոցիալական գործառույթները:
2. Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման տեսակների ու ձևերի լրամշակված համալիրը պայմանավորված է գնահատման և ստուգման չափանիշներով, հասարակական կյանքի բոլոր բնագավառների և ոլորտների ժողովրդավարացման և հումանացման միտումներով, ուսուցման նոր տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությամբ:
3. Տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման, գիտելիքների ստուգման և գնահատման տեսակների և ձևերի կիրառման արդյունավետությունը ապահովվում է ուսուցման գործընթացում անձնակողմնորոշվածության, անձի ազատության, հարկադրանքի բացառման և հումանիստական փոխհարաբերությունների հաստատման սկզբունքների կիրառմամբ:
4. Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկողության, ստուգման և գնահատման լրամշակված համալիրը էական դրական ազդեցություն կունենա կրտսեր դպրոցականների ստեղծագործական ընդունակությունների, ուսումնական գործունեության արդյունավետ ապահովման ուսումնա-դաստիարակչական աշխատանքների հումանացման վրա:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը: Հետազոտության արդյունքների և նրա ընթացքի մասին զեկուցվել է Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության և Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ընդհանուր մանկավարժության ամբիոններում, միջբուհական գիտաժողովներում, մանկավարժական մամուլում տպագրվել են հետազոտության արդյունքներն արտացոլող հոդվածներ:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորվում են հիմնախնդրի շրջանակներում հոգեբանամանկավարժական, մեթո-

դական ու մասնագիտական գրականության և մշակված հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հետազոտության տրամաբանությանը, օբյեկտին, նպատակին, խնդիրներին, համարժեք տեսական և էմպիրիկ մեթոդների օգտագործմամբ, փորձարարական արդյունքներ հիմնավորմամբ, հետազոտության տվյալների մաթեմատիկական մշակման արդի մեթոդների կիրառմամբ և արված եզրահանգումներով:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու իրար լրացնող և միմյանց օրգանական շարունակություն կազմող գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 151 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության՝ «**Կրտսեր դպրոցականի գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման հիմնախնդրի տեսական-մեթոդաբանական հիմքերը**» խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման տեսակների ու ձևերի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը**», պատմաքննական վերլուծության են ենթարկված սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման տեսակների ու ձևերի, ստուգման և գնահատման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները:

Կրթության նոր հարացույցը պահանջում է արմատական բարեփոխումներ կրթության բովանդակության, այդ գործընթացի սուբյեկտների հարաբերությունների, նպատակների վերաբերյալ մոտեցումների մեջ: Այդ համատեքստում մանկավարժական գործընթացի սուբյեկտների երկխոսությունը դառնում է ուսուցման արդյունավետության կարևոր պայման: Գնահատականը՝ որպես մարդասիրական (անձնակողմնորոշիչ) ուսուցման կարևոր բաղադրիչ, դիտարկվում է որպես մանկավարժական գործընթացի սուբյեկտների երկխոսություն, որի հիմքը անձի ճանաչողական պահանջմունքների բավարարման գործընթացն ու արդյունքն է և մարդու ընդհանուր զարգացումը: Մանկավարժական գործընթացի կարևորագույն բաղադրիչ է դառնում ուսուցչի և աշակերտների անձնակողմնորոշված համագործակցությունը, առանձնահատուկ դեր է հատկացվում մարդու հոգևոր դաստիարակությանը, անձի կայացմանը:

Ներկայացված է գնահատման միավորային համակարգի ձևավորման և զարգացման պատմությունը: Նշվում է, որ միավորային գնահատման համակարգի դեպքում վերահսկվում և գնահատվում էր գիտելիքը, նրա մտապահման

աստիճանը, ուշադրությունից դուրս են մնում կարողությունների և հմտությունների որակի վերահսկման հարցերը:

Բնութագրվել են «վերահսկողություն», «գնահատում», «հաշվառում», «գնահատական», «թվանշան» հասկացությունները:

Տրված է ավանդական և ժամանակակից գնահատման մեթոդների և ձևերի համեմատական բնութագիրը:

Հիմնավորվում է, որ մանկավարժական գնահատումը պետք է նպաստի աշակերտների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, նրանց գիտելիքների և դաստիարակվածության մակարդակի բարձրացմանը, ուսման դրդապատճառների ձևավորմանը: Իսկ եթե խոսքը գնահատականների միավորային համակարգը գիտելիքների գնահատման այլ համակարգով փոխարինելու մասին է, ապա սկզբունքորեն նման անցումը հնարավոր է հատկապես տարրական դասարաններում: Սակայն դա կպահանջի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացի վերակառուցում, ուսուցիչների, աշակերտների և ծնողների հոգեբանության փոփոխում, կազմակերպական-մանկավարժական բարեփոխումներ:

Տրված են սովորողների գիտելիքների կարողությունների և հմտությունների որակի վերահսկողության բնութագիրը և գործառույթները:

Նշվում է, որ սովորողների ուսումնական գործունեության արդյունքների վերահսկողությունը պետք է՝

- կրի համակարգված բնույթ,
- ընդգրկի ուսումնական ծրագրի հիմնական բաժինները,
- ունենա անհատական բնույթ յուրաքանչյուր աշակերտի աշխատանքի նկատմամբ,
- աչքի ընկնի անցկացման ձևերի բազմազանությամբ,
- լինի օբյեկտիվ և թափանցիկ,
- ապահովի բոլոր ուսուցիչների միասնական մոտեցումը:

Վերահսկողությունն իրականացնում է կրթական, դաստիարակչական և զարգացնող գործառույթներ, սակայն կարևորագույն գործառույթը ախտորոշիչն է, երբ ուսուցիչը բացահայտում է սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորման աստիճանը, դրանց ելակետային մակարդակը՝ նրանց նոր գիտելիքների յուրացմանը պատրաստելու համար:

Վերահսկողությունը սերտորեն կապված է գնահատականի հետ: Գնահատականը ցույց է տալիս, թե յուրացման արդյունքները որքանով են համապատասխանում ուսումնական իրադրության պահանջներին: Տարրական դասարաններում գնահատման հիմնական դերը պատկանում է ուսուցչին, սակայն սովորողների ինքնավերահսկողության կարողության ձևավորման զուգընթաց գնահատման գործառույթն անցնում է նաև նրանց:

Բնութագրված են վերահսկողության տեսակները, ձևերն ու մեթոդները և վերահսկողությանը ներկայացվող պահանջները՝ վերահսկողության անհատական բնույթը, վերահսկողության անցկացման համակարգվածությունն ու կանոնավորությունը, անցկացման ձևերի բազմազանությունը, համակողմանիությունը, վերահսկողության օբյեկտիվությունը, տարբերակված մոտեցումը, վերահսկողություն իրականացնող ուսուցիչների պահանջների միասնությունը: Դիտարկվածեն գնահատման սկզբունքները և հիմնական գործառույթները:

Դիտարկելով սովորողների գիտելիքների գնահատման ներկա 10-միավորային համակարգի թերությունները՝ հիմնավորվել է այն կատարելագործելու անհրաժեշտությունը:

Մեր կարծիքով առաջին հերթին գնահատման նույն համակարգը չի կարելի կիրառել և՛ տարրական, և՛ հիմնական, և՛ ավագ դպրոցում՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական, հոգեբանական առանձնահատկությունները և առողջարարական խնդիրները:

Բացի 10-միավորային համակարգից՝ ուսումնական գործընթացում կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարք:

Մենք կարծում ենք նաև, որ տարրական դասարաններում սովորողների առաջադիմության հաշվառման, գիտելիքների գնահատման ներկա համակարգը հատկապես ներառական կրթության այսօրվա պայմաններում ճկուն չէ, այն առումով, որ ֆիզիկական և մտավոր զարգացման որոշակի արտահայտված արատներ ունեցող երեխաները երբեմն հայտնվում են ավելի ծանր կացության մեջ, իսկ դրանց մի մասն էլ հարկադրված վերարտադրում է օրվա դասը, առանց խորանալու երևույթների ու պատճառների մեջ:

Մեր կարծիքով ուսուցչի աշխատանքը տարրական դպրոցում պետք է առաջին հերթին հենվի կրթական վերջնարդյունքների կանխատեսման վրա: Այսինքն՝ ուսուցիչը, նախապես ծրագրավորելով իր աշխատանքը՝ ի՞նչ է տալիս և դրա արդյունքում ինչ պետք է ստանա, պետք է հենվի հետադարձ գործունեության վրա՝ առաջին հերթին գնահատելով իր գործունեության արդյունքը:

Վերջնարդյունքի կանխատեսումը կբացառի սովորողների գիտելիքների, կարողությունների մեխանիկական, չհիմնավորված գնահատումը՝ առաջին պլան մղելով ուսուցիչ-աշակերտ արդյունավետ համագործակցությունը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման նպատակն ու չափանիշները»,** ներդպրոցական վերահսկողության համակարգի բնութագրման նպատակով դիտարկված են «որակ», «գիտելիքների որակ» հասկացությունների փիլիսոփայական, մանկավարժական մեկնաբանումները:

Մեր կարծիքով կրտսեր դպրոցականների կրթության որակը որոշվում է նրանց ստացած գիտելիքների, կարողությունների և հմտությունների, դաստիարակվածության ընդհանուր մակարդակով՝ դառնալով հենց այդ մակարդակի ցուցանիշը և բնորոշելով դպրոցի կողմից սոցիումին տրամադրված կրթական ծառայությունների և կրթական գործընթացի սուբյեկտների սպասումների բավարարման աստիճանը:

Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի գնահատման որակը առաջին հերթին որոշվում է պետական չափորոշիչին նրա համապատասխանությամբ:

Ներկայացված են կրտսեր դպրոցականների գիտելիքների որակի վրա ազդող գործոնները:

Ընդհանրապես հսկողությունը և վերահսկողությունն ուղղված են արտաքին և ներքին հակադարձ կապի ապահովմանը և իրականացվող կրթական գործընթացի որակի վերաբերյալ տեղեկատվության ստուգմանը:

Գիտելիքների որակ ասելով պետք է հասկանալ սովորողների ուսումնաճանաչողական գործունեության արդյունքը՝ գիտելիքների համեմատաբար կայուն ամբողջությունը:

Գնահատումը սովորողների ուսումնական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, կուտակելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության իրականացման բովանդակային, կազմակերպական արդյունքներն ի հայտ բերելու և վերահսկելու գործընթացն է, իսկ գնահատման նպատակը գիտելիքների, կարողությունների և հմտությունների, արժեհամակարգի տիրապետման և անձնային առաջընթացի որակի վերահսկումն է:

Հիմնավորվում է, որ կրտսեր դպրոցականի գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկողության ձևերը, տեսակներն ու մեթոդները պայմանավորված են նրանց տարիքային և հոգեբանական առանձնահատկություններով և ուսուցման նպատակների որոշմամբ:

Ներկայացված են գիտելիքների որակին ներկայացվող չափանիշները՝ գիտելիքների ամբողջականությունը, խորությունը, օպերատիվությունը, ճկունությունը, որոշակիությունն ու ընդհանրացվածությունը, սեղմությունն ու ընդարձակությունը, համակարգվածությունը:

Առանձնացված են գիտելիքների յուրացման աստիճանները:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման տեսակները, ձևերն ու մեթոդները»**, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Ուսուցիչների մասնագիտական կոմպետենտությունը՝ որպես սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման արդյունավետության կարևոր պայման**», հիմնավորվում է, որ կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկողությունը պայմանավորված է ուսուցչի մասնագիտական կոմպետենտության մակարդակով:

Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկողությունը ենթադրում է նոր պայմաններում ուսուցչի վերահսկողական գործունեությանը ներկայացվող մեթոդաբանական պահանջների, ուսուցչի գործունեության գնահատման հիմնական սկզբունքների, մեթոդների, չափորոշիչների և չափանիշների վերանայում:

Ըստ որում մանկավարժի մասնագիտական իմացությունը դրսևորվում է հիմնական մասնագիտական գործառույթների՝ **նախագծման, կառուցողական, կազմակերպչական, հաղորդակցական, դաստիարակչական:**

Նշված գործառույթների թվում մենք ավելացնում ենք նաև մանկավարժական կառավարումը, ուսուցչի մանկավարժական աշխատանքի գիտական կազմակերպումը, որոնք ապահովում են ուսուցչի կողմից անցկացվող ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետությունը:

Երկրորդ ենթագլխում՝ «**Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման առաջադրվող մեթոդների, տեսակների և ձևերի բնութագիրը**», նշվում է, որ սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման՝ հաշվառման, ստուգման և գնահատման գլխավոր ելակետը առարկայական չափորոշիչն է, որով սահմանված է գիտելիքների, կարողությունների, հմտությունների շրջանակը յուրաքանչյուր դասարանի աշակերտների համար, որը ապահովում է նրանց ուսումնական ձեռքբերումների գնահատման պահանջների և մոտեցումների միասնությունը: Մշակված են պահանջներ և հրահանգներ, որոնք կարգավորում են գնահատականների ձևավորման և նշանակման կարգը:

Սակայն մենք կարծում ենք, որ տարրական դպրոցում ուսուցիչները չպետք է սահմանափակվեն այս կամ այն միավորը դնելով, այլ նաև մեկնաբանեն այդ միավորները և աշակերտներին պատասխաններ տան, մատնանշեն նրանց ջանասիրությունը և պատասխանատվությունը:

Տարրական դպրոցում գնահատման գոյություն ունեցող համակարգը կատարելագործելու նպատակով՝ թվանշանային գնահատականների հետ միասին առաջարկում ենք դասամատյանում կամ հատուկ տետրի մեջ գրանցել լրացուցիչ տեղեկություններ աշակերտի առաջադիմության, տվյալ առարկայի գծով նրա պատրաստության, պատասխանների սխալների և անճշտությունների, անհատական առանձնահատկությունների մասին: Այն հնարավորություն կտա ուսուցչին կենսագործելու աշակերտների նկատմամբ տարբերակված մոտեցում:

Համալիր գնահատման համար անհրաժեշտ է ճշգրտորեն առանձնացնել պատասխանի բոլոր տարրերը և որոշել նրանց հարաբերական կշիռը: Բաղադրամասերի թիվը և նրանց կշիռը որոշվում են նախապես և մնում են որպես հարաբերականորեն հաստատուն մեծություններ:

Վերոբերյալը ենթադրում է, որ տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկումը ենթադրում է նրանց ուսումնական գործընթացի արդյունքների որակյալ գնահատում: Իսկ դրա համար անհրաժեշտ է վերահսկման մեթոդների կատարելագործում, որը և մեր հետազոտության խնդիրներից մեկն է, և որի լուծմանը ձեռնամուխ ենք եղել տարրական դպրոցում մեր երկարամյա աշխատանքի ընթացքում:

Տրված են առաջարկվող դիագնոստիկ /ախտորոշման/, սովորողների ինքնագնահատման մակարդակի ուսումնասիրման, գիտելիքների համալիր գնահատման, հանրագումարային գնահատականի արտածման, գիտելիքների համալիր գնահատման մեթոդների բնութագիրը և կիրառման նպատակահարմարությունը:

Հիմնավորվում է, որ կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման, գիտելիքների գնահատման գործընթացում առկա թերությունների վերացմանը զգալիորեն կնպաստի ծրագրավորված ուսուցումը: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման ու գնահատման ինովացիոն մեթոդները մանկավարժական առաջավոր փորձի հետ ուսուցչի համար բացում են դրանց որակի վերահսկման լայն հնարավորություններ:

Այդ տեսակետից նպատակահարմար ենք համարում կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների հաշվումը, ստուգումն ու գնահատումը և դրանց որակի վերահսկումը կազմակերպել նոր, ժամանակակից եղանակներով ու ձևերով: Դրանցից մեկը, որը առկա է միջազգային փորձում և մշակվել է ու տեղայնացվել հայ մանկավարժագետների խմբի կողմից, «ռուբրիկն է»: Մեր կողմից ստեղծագործական մոտեցում է ցուցաբերվել «գնահատման ռուբրիկի» բովանդակությանը և այն օգտագործվել է տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի վերահսկողության գործընթացում:

Երրորդ ենթագլխում «**Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման տեսակների և մեթոդների մշակված համալիրի փորձարարական ստուգումը**», ներկայացված են կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մշակված համալիրի փորձարարական ստուգման արդյունքները:

Բնութագրված են փորձարարության խնդիրները, ընթացքը: Փորձարարական աշխատանքների նպատակի իրականացման համար պահանջվել է չափանիշների համալիր, որի հիման վրա հնարավոր է եղել գնահատել առաջարկվող վերահսկողության տեսակների, մեթոդների և ձևերի արդյունավետությունը:

Որպես բովանդակային չափանիշներ՝ առանձնացվել են ուսումնառության նպատակադրությունը, գիտելիքների հենքային մակարդակը, գնահատման նկատմամբ աշակերտի վերաբերմունքը, նրա ինքնագնահատման կարողությունը:

Արձանագրող փորձարարության արդյունքները մայրենիից և մաթեմատիկայից բացահայտեցին մի շարք թերություններ աշակերտների գիտելիքների յուրացման մեջ: Դա արտահայտվեց կատարած առաջադրանքների և հենքային մակարդակը հաղթահարած աշակերտների թվով:

Որպես գիտելիքների յուրացվածության չափանիշ՝ մենք առանձնացրել ենք հետևյալ մակարդակները՝ բարձր, միջին, ցածր:

Առաջադրանքների կատարման արդյունքները ցույց տվեցին, որ աշակերտները դժվարանում են խնդրի պայմանների կարճ գրության 86%, գործողությունների քայլերի հերթականության պահպանման 12%, ուշադրության կենտրոնացման 33%, ինչպես նաև բազմապատկման և բաժանման աղյուսակների իմացության առումով:

Այս կարողությունների բացակայությունը վկայում էր աշակերտների կողմից գիտելիքների յուրացման ցածր մակարդակի մասին:

Երկու դասարանների սովորողների մաթեմատիկա առարկայից ունեցած դժվարությունների համեմատումը թույլ տվեց անելու հետևյալ եզրակացությունները՝ սովորողների դժվարությունները պայմանավորված են գիտելիքների, կարողությունների, հմտությունների վերահսկման ձևերով, ուսուցչի և աշակերտների գնահատականների անհամապատասխանությամբ, աշակերտների ուսումնական նպատակներով, դրդապատճառներով, վերահսկման համակարգի թերություններով:

Ներկայացված է 2-4-րդ դասարանների աշակերտներին տրված հարցաշարը: Արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ բարձր գնահատականներ ունեցող աշակերտները հակված էին ավելի հուզական վերաբերվել գնահատման համակարգին և արդյունքում բարձր գնահատականը վերագրում էին սեփական անձին և ոչ աշխատանքի արդյունքին: Իսկ միջին և ցածր գնահատական ստացող աշակերտները գրեթե անտարբեր էին ողջ գործընթացի նկատմամբ:

Միևնույն ժամանակ լրացված անավարտ նախադասությունների պատասխաններից պարզ դարձավ, որ կրտսեր դպրոցականների կարծիքները գործող գնահատման միավորային համակարգի նկատմամբ միանշանակ չեն: Նրանցից շատերը կարևորում են ուսուցչի բանավոր գնահատողական խոսքը, մյուսների համար էական է ծնողների գովասանքը: Բանավոր գնահատողական խոսքը խթանիչ դեր է կատարում ուսումնական մոտիվացիայի ձևավորման համար: Իսկ նրանց մի մասը դպրոց է գնում ընկերներին հանդիպելու, խաղալու համար:

Ելնելով վերոբերյալից՝ մենք գտնում ենք, որ տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման նպատակահարմար ձև է ռուբրիկը:

Թվարկված են ռուբրիկի առավելությունները միավորային գնահատման ձևի

համեմատ: Ռուբրիկներն ապահովում են գնահատման մի քանի գործառույթներ՝ գնահատում, արժևորում, որակավորում: Վերլուծվում, քննարկվում են գործողությունները, դրանք կատարելու համար աշակերտի դրսևորած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Մենք կարևորում ենք *կատարման ընթացքը, որակը և նրա գնահատումը:*

Այս ճանապարհով ընթանալիս գնահատումը դադարում է ընդամենը թվանշանների հավաքածու դառնալուց: Աշակերտը հետևողականորեն տեղեկացվում է իր առաջադիմության ուժեղ և թույլ կողմերի մասին:

Այսպիսով, ռուբրիկի միջոցով ուսուցչի և աշակերտի համար պարզորոշ սահմանվում են աշխատանքի կատարման որակը, նրա ընդունելի և անընդունելի մակարդակները՝ դրանք հիմնավորելով համապատասխան նիշերով, արժեքներով կամ առանձին բնութագրումներով: Որպես նաև դասի կազմակերպման ձև՝ ռուբրիկները կազմվում են տվյալ դասի համար՝ ուսուցման և ուսումնառության սպասվելիք արդյունքները ի սկզբանե հայտնի դարձնելով:

Տրված են ռուբրիկների մի քանի հենքային նմուշներ, որոնցով դիտարկվել են աշակերտների ինքնագնահատականները և ուսուցիչների գնահատականները՝ յուրաքանչյուր որակների համար արտահայտված միավորներով: Փորձարարությունից հետո նկատվել է, որ աշակերտների ինքնագնահատականների միջինը զգալիորեն մոտեցել է ուսուցչի՝ միավորներով արտահայտված միջինի գնահատականներին (աղ. 1):

Աղյուսակ 1

Տարրական դպրոցում սովորողի ուսումնական ձեռքբերումների բնութագիրը

Գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի վերահսկման սանդղակ փորձարարական հետազոտությունից հետո				
N	Հիմնական որակներ	Միավորների առավելագույն քանակ	Ինքնագնահատման արդյունքում տրված միավորներ	Ուսուցչի կողմից տրված միավորներ
1	Թեմայի ամբողջականություն և փաստարկվածություն	30	27	24
2	Տրամաբանական կառուցվածք	25	22	23
3	Պատկերավորություն	25	21	23
4	Արդյունավետ ծավալ	5	4	4
5	Խոսքի հստակություն, տեմպ	5	3	3
6	Քերականության իմացություն	5	2	3
7	Համարժեք կեցվածք և դիմախաղ	5	4	2
Ընդամենը		100	83	82

Տարրական դպրոցում սովորողի ուսումնական ձեռքբերումների բնութագիրը տալու համար մենք ուսումնական գործընթացը տարանջատել ենք երկու բաղադ-

րիչների՝

1.առարկայական

2.հոգեբանական:

Առարկայական մասով Մայրենի լեզվի համար հարցում է անցկացվել 100 սովորողի հետ՝ յուրաքանչյուրի պատասխանը գնահատելով այսօր գործող 10-միավորային համակարգով:

Հաշվարկվել են միջին թվաբանականները: Այնուհետև համեմատվել են աշակերտների ինքնագնահատականների և ուսուցչի գնահատականների միջինները: Արդյունքում պարզվել է, որ փորձարարությունից առաջ աշակերտների ինքնագնահատականների միջիններն ավելի մեծ նիշով են տարբերվում ուսուցչի գնահատականների միջինից, քան փորձարարությունից հետո:

Սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման ժամանակակից տեսակներից մեկը մենք համարում ենք դպրոցականների ինքնագնահատումը:

Փորձարարական հետազոտության նպատակներից է եղել զարգացնել կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողությունը, իրականացնել ինքնագնահատականի համադրում ուսուցչի գնահատականի հետ, հասնել աշակերտի ինքնագնահատականի և ուսուցչի գնահատականի առավել համապատասխանության:

Փորձարարական հետազոտության արդյունքում պարզվեց, որ փորձարարությանը մասնակցող կրտսեր դպրոցականներից մի մասի ինքնագնահատականը բավականին բարձր է ուսուցչի գնահատումից: Սա մեր կարծիքով արդյունք է այն բանի, որ սովորողը չի կարողանում սթափ գնահատել իրավիճակը, տեսնել իր՝ բավականին ակնառու թերությունները: Վերջինս վկայում է նաև սովորողների՝ սեփական գիտելիքներին և կարողություններին քննադատական մոտեցման բացակայության մասին:

Փորձարարական հետազոտության մասնակիցների մյուս մասի ինքնագնահատականն ավելի ցածր է, քան ուսուցչի գնահատականը, որը սեփական ուժերի նկատմամբ թերահավատության, անվստահության արդյունք է:

Միաժամանակ բացահայտեցինք, որ փորձարարական հետազոտության մասնակիցներից ոմանց ինքնագնահատականը համընկնում է ուսուցչի գնահատականի հետ: Վերջինս վկայում է աշակերտների ինքնագնահատման կարողության զարգացածության անհրաժեշտ մակարդակի մասին:

Տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման ամփոփիչ բնութագիրը ստանալու նպատակով 4-րդ դասարանում մայրենիի ծրագրային նյութի շուրջ կազմվել է առաջադրանք: Առաջադրանքի կատարման արդյունքների վերլուծությունը մեզ հնարավորություն տվեց գնահատելու սովորողների կարդալու, գրելու, խոսելու և լսելու կարողությունները: Միաժամանակ մենք աշակերտներին սեփական աշխատանքի ինքնագնահատման հնարավորություն տվեցինք:

Փորձարարական հետազոտությունից հետո բացահայտեցինք, որ աշակերտների ինքնագնահատականները զգալիորեն մոտեցել են ուսուցչի գնահատականներին: Այս արդյունքները հանգեցնում են մի շարք խնդիրների լուծման. գնահատումը դառնում է ոչ թե ինքնանպատակ, այլ

անձնակողմնորոշված գործունեություն, որի արդյունքում ճշգրիտ արտացոլվում է սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակը:

Միևնույն ժամանակ փորձարարական հետազոտության արդյունքները փաստում են ինքնագնահատման՝ որպես սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման արդյունավետ տեսակի մասին:

Աղյուսակներով և գրաֆիկներով ներկայացված է 4-րդ դասարանում մայրենիից և 2-րդ դասարանում մաթեմատիկայից սովորողի գիտելիքների, կարողությունների, հմտությունների գնահատման ամփոփիչ բնութագիրը փորձարարական հետազոտությունից առաջ և հետո (աղ. 2 և 3):

Աղյուսակ 2

Տարրական դպրոցի IV դասարանում մայրենիից սովորողի գիտելիքների,կարողությունների, հմտությունների գնահատման ամփոփիչ բնութագիրը փորձարարությունից առաջ						
	Աշակերտի ինքնագնահատանի մակարդակները			Ուսուցչի գնահատականի մակարդակները		
Մայրենի	միջին	լավ	գերազանց	միջին	լավ	գերազանց
խոսել	15	40	45	10	35	55
լսել	5	45	50	10	35	55
կարդալ	5	55	40	15	35	50
գրել	10	35	55	10	45	45

Աղյուսակ 3

Տարրական դպրոցի IV դասարանում մայրենիից սովորողի գիտելիքների, կարողությունների, հմտությունների գնահատման ամփոփիչ բնութագիրը փորձարարությունից հետո						
	Աշակերտի Ինքնագնահատանի մակարդակները			Ուսուցչի գնահատականի մակարդակները		
Մայրենի	միջին	լավ	գերազանց	միջին	լավ	գերազանց
կարդալ	10	45	45	15	40	45
գրել	15	40	45	10	40	50
խոսել	10	45	45	15	40	45
լսել	15	45	40	10	50	40

Տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման տեսակների, ձևերի և մեթոդների կատարելագործմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքների տեսական վերլուծությունը և մանկավարժական փորձարարական հետազոտության արդյունքները թույլ են տալիս ձևակերպելու հետևյալ եզրակացությունները.

1. Հետազոտության արդյունքները վկայում են, որ կրթական բարեփոխումների և կրթական նոր հարացույցի արդի պայմաններում

էական նշանակություն է ձեռք բերում տարրական դպրոցի սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման տեսակների, ձևերի և մեթոդների լրամշակումը՝ հաշվի առնելով ներառական կրթության, կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:

2. Արդի կրթական պահանջներին համարժեք տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորվածության մակարդակների մեր կողմից առաջադրված չափանիշները կնպաստեն ուսման որակի վերահսկման ու գնահատման գործընթացի կատարելագործմանը, սովորողների իմացական ակտիվության բարձրացմանը:
3. Բացահայտված և հիմնավորված է տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման՝ ստուգման և գնահատման 10 միավորային համակարգի որոշակի անհամապատասխանությունը նրանց տարիքային, հոգեբանական և ուսումնական գործունեության առանձնահատկություններին, քանի որ այն ուղղված է ոչ միայն գիտելիքների յուրացվածության որոշակի մակարդակի, այլև կարողությունների և հմտությունների ձևավորվածության աստիճանի նպատակաուղղված բացահայտմանը:
4. Գիտականորեն հիմնավորվել է, որ կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի վերահսկման տեսակների, մեթոդների ու ձևերի մեր կողմից լրամշակված համալիրի կիրառումը կարող է ապահովել տարրական դպրոցում ուսուցման գործընթացի արդյունավետությունը և կրթության որակը: Այդ համալիրը ներառում է՝ վերահսկման տեսակները՝ քանակական, որակական, ձևերը՝ ռուբրիկներ, հրապարակային մատյաններ, պարբերաթերթեր, ինքնագնահատման թերթիկներ, աշակերտների ինքնուրույն աշխատանքների ստուգատեսեր, մեթոդներ՝ հավանականության և համադրական:
5. Հետազոտությամբ ապացուցվել է տարրական դպրոցում սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակի վերահսկման տեսակների, մեթոդների ու ձևերի լրամշակված համալիրի գործառույթները և դրանց դերը սովորողների ինքնագնահատման, ինքնավերահսկման և ստեղծագործական կարողությունների արդյունավետ ձևավորման գործում:
6. Հիմնախնդրի վերաբերյալ մեր կողմից կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման գործընթացը պետք է կառուցվի մարդասիրական և անձնակողմնորոշված մոտեցումների հիման վրա: Կարծում ենք, որ այդ տեսանկյունից նպատակահարմար է գնահատման 10 միավորային համակարգը կիրառել միայն չորրորդ դասարանում, իսկ առաջինից երրորդ դասարաններում կիրառել գնահատման գործառույթ կատարող տարբեր բնութագրումներ:
7. Հետազոտությամբ ձևակերպված կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորվածության չափանիշներն ու մակարդակները՝ գիտելիքների ծավալը, խորությունը, գիտականությունը, հաստատունությունը, վերարտադրելու տրամաբանությունն ու լեզուն,

գիտելիքները մտավոր աշխատանքի մեջ և պրակտիկայում օգտագործելու կարողություններն ու հմտությունները կնպաստեն ուսման որակի վերահսկման ու գնահատման ժամանակակից համակարգի կատարելագործմանը:

8. Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման առաջարկվող տեսակների և ձևերի կիրառումը տարրական դպրոցի ուսումնական գործընթացում կբարձրացնի սովորողների ուսումնական, ճանաչողական ակտիվությունը՝ կարգավորելով աշակերտների ինքնագնահատականի և ուսուցչի կողմից տրված գնահատականի համահարաբերակցությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Գնահատման իմ փորձից: Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Եր. 2005թ., թիվ 1-2:
2. Սովորողների գիտելիքների կարողությունների և հմտությունների գնահատման պատմական զարգացումը. Եր.- Մխիթար Գոշ.- 2008թ., թիվ 3. էջ 129-132:
3. Ուսուցման նպատակները: Մանկավարժական և աշակերտական նպատակների առանձնահատկությունները գիտելիքների հաշվառման, ստուգման և գնահատման գործում: Եր.- Մխիթար Գոշ.- 2008թ., թիվ 3. էջ 133-136:
4. Այլընտրանքային գնահատումն ակտիվ ուսումնառության գործընթացում: [Համահեղինակ՝ Պ.Գևորգյան]: Կրթություն, բարեփոխումները հիմնախնդիրներ.- Հանրապետական գիտաժողովի նյութեր: Վանաձոր, 2010թ., էջ 72-79:
5. Կրտսեր դպրոցականների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման ու գնահատման, դրանց որակի վերահսկման սկզբունքները և ձևերը: Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 2013թ., էջ 358-363:

Мирабян Лусик Сейрановна

ВИДЫ И ФОРМЫ КОНТРОЛЯ КАЧЕСТВА ЗНАНИЙ, УМЕНИЙ И НАВЫКОВ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ МЛАДШЕГО ШКОЛЬНИКА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13. 00.01-“Теория и история педагогики”

Защита диссертации состоится 20-ого ноября, 2014г., в 12^{00} часов на заседании специализированного совета “Педагогика” 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адрессу: 0010, Ереван, ул. Тигран Меца 17

РЕЗЮМЕ

Актуальность исследования

Одним из основных особенностей современной системы образования является переход от системы государственного управления образованием к форме государственно-общественного управления. В педагогической науке и практике все более актуальной становится проблема обеспечения эффективности управления педагогическим процессом. В этом контексте управление процессом обучения подразумевает контроль со стороны субъектов управления, то есть применение системы диагностики, контроля и оценки его качества и эффективности.

Учебные достижения учащихся обусловлены их взаимоотношениями с учителем. Рассмотренные в работе принципы, методы и формы обучения (учебники и методические разработки), тесно взаимосвязаны с данной проблемой. В психолого-педагогической литературе в основном предлагают разнообразные аспекты контроля знаний, его функции, методы и формы. Как известно, многие из предложенных форм контроля до сих пор мало исследованы или вовсе не рассмотрены в педагогической литературе.

Цель исследования

Разработать комплекс видов,форм и методов контроля качества знаний, умений и навыков младших школьников.

Задачи исследования

1. Изучить и проанализировать методологию традиционной и современной систем контроля качества знаний, умений и навыков, их учета, проверки и оценки в учебном процессе младших школьников.
2. Выявить проблемы и недостатки контроля качества и оценки знаний, умений и навыков учащихся, разработать пути их устранения.
3. Разработать новые методологические подходы к видам, формам и методам контроля качества знаний, умений и навыков, их учета, проверки и оценки в учебном процессе начальной школы и экспериментально обосновать эффективность их применения.

Научная новизна исследования

1. Уточнена методология контроля качества знаний, умений и навыков учащихся начальной школы.
2. Предложены принципы контроля проверки и оценки качества знаний, умений и навыков младших школьников.

3. Изучены, обоснованы роль и значение контроля, проверки и оценки качества знаний, умений и навыков младших школьников в целостном педагогическом процессе.
4. Разработаны новые подходы к видам, методам и формам контроля: проверке и оценке качества знаний, умений и навыков младших школьников,которые посодействуют эффективности их учебной деятельности и повышению самооценки. Они включают виды контроля /комплексный, дифференцированный, качественный, количественный и т.д; формы/ рубрики, публичные журналы учета, портфолио и т.д.; методы /сопоставительный вероятностный/.
5. На основе новых подходов определены и сформулированы уровни и критерии (обьем и глубина, научность, константность знаний, умений и навыков) сформированности знаний, умений и навыков младших школьников, которые будут способствовать совершенствованию современной системы контроля качества обучения в начальной школе.

Теоретическая значимость

1. Осуществлен теоретический, концептуальный анализ проблемы оценки знаний,, умений и навыков младших школьников.
2. Основные теории контроля: проверки и оценки качества знаний, умений и навыков младших школьников обогащены новыми подходами.
3. Раскрыты содержательные и функциональные характеристики контроля качества знаний, умений и навыков школьников с позиций личностноориентированного и гуманистического подходов.

Практическая значимость исследования

Новые подходы к видам, методам и формам контроля качества знаний, умений и навыков младших школьников окажут учителям действенную помощь. Материалы диссертации с успехом могут применяться в учебном процессе факультета педагогики и методики начального обучения.

Структура и объем диссертации

Диссертация изложена на 151 страницах компьютерного текста, состоит из введения, двух глав, выводов, списка литературы и приложений.

Lusik Mirabyan Seyran

THE TYPES AND WAYS OF KNOWLEDGE, SKILLS AND COMPETENCE QUALITY CONTROL IN THE PROCESS OF TEACHING THE YOUNG LEARNER

Thesis for the degree of Pedagogical science degree, speciality 13.00.01- "Theory and History of Pedogogy ".

The defense of the thesis will be held at 12^{00} on November 20, 2014 at the session of the Special Boand 020 HAC (Higher Attestation Commission) to award degrees under the Yerevan State Pedagogical University after Kh. Abovyan, address: 0010, Yerevan, Tigran Mets str. 17

SUMMARY

The relevance of the research:

The problem of controlling pedagogical process efficiency is becoming more and more important in Pedagogy and practice. The control of teaching process implies the supervision process realization with subjects, that is to say, to use some system of checking, evaluating and controlling its quality and efficiency.

The aim of the research is to elaborate the effective types and ways of young learners' knowledge, skills, competence quality control.

The objectives of the research:

1. To survey and describe the accounting, checking and evaluating current system of learners' knowledge, skills, competence.
2. To reveal the learners' knowledge, skills and competence evaluation and the flaws in their quality control and to offer the ways of vanishing them .
3. To elaborate new approaches, types and ways of learners' knowledge, skills, competence evaluation quality control at primary school.
4. To offer new, contemporary and effective ways of quality and knowledge evaluation of learners' knowledge, skills, competence according to the practice of the past, to offer the accounting of young learners' age and pychological peculiarities .
5. To prove scientifically the efficiency of learners' knowledge, skills, competence evaluation and their quality control types and ways, the use of new technologies represented by us.

The scientific innovation of the research

- The complex of types and ways of learners' knowledge, skills and competence checking and evaluation and their quality control was elaborated, which will contribute to the young learner's individuality development.
- The types and ways, the principles of their realisation and the process of knowledge, skills and competence checking, evaluation and their quality control were formed at primary school.

The theoretical value of the research:

- The main theories concerning individual's development, personal and psychological peculiarities, types and ways of learners' knowledge, skills and competence quality control and evaluation quality control were surveyed.

- The theoretical, conceptual analysys of young learners' knowledge, skills and competence evaluation problem was realised.
- The content and functional descriptions of learners' knowledge, skills and competence system checking evaluation and their quality control were revealed from the individual-oriented humanitarian thoughts side.

The practical value of the research:

New principles and standards of checking and evaluating young learners' knowledge, skills and competence were elaborated, which will serve to realize knowledge, evaluation individual-oriented and humanitarian approach principles and this will be of practical help to teachers.

The structure of the research consists of introduction, two chapters, conclusions bibliography and appendices.